



Լեմ գրող Ստանիսլավ Լեմի անունը լավ հայտնի է Սովետական Միությունում: Հայ ըստերցողն առաջին անգամ նրա հետ ծանոթացել է: «Գոյություն ունե՞ք արդյոք միստր Զօնս» պատմվածքով: Իսկ վերջերս Հայստանի հրատարակած «Մագելլանի ամպը» վեպը, որն իրավամբ համարվում է Ս. Լեմի գլուխգործոցը. կարծ ժամանակում ճանաչում բերեց գրողին նաև հայ ընթերցողների շրջանում:

Հիմա Ս. Լեմը աշխատում է հումորիստական նովելների շարքի վրա, որոնցից մեկը տպագրում ենք պարբերականի այս համարում:

Ստանիսլավ ԼԵՄ

Կոնստրուկտոր Տրուբը հորինել էր սի մեքենա, որն անում էր ամեն ինչ, եթե այն սկսվում էր «ա» տառով: Եթե մեքենան արդեն պատրաստ էր, Տրուբը փորձի համար ստիպեց նրան ստանալ Ապակի, հետո դրանք իրար միացնելով պատրաստել Ակվարիումի Արկղիկ, ապա ստեղծել Աղբյուր՝ ակվարիումը ջրով լցնելու համար, այնուհետև հատակին շաղ տալ Ապակ և Ապարի կտորտանք ու դրանցով պատրաստել ստորջրյա Այրեր՝ ձկների համար:

Ու թեև մեքենան ամեն ինչ կատարում էր անթերի, այնուամենայնիվ, կոնստրուկտորը, դեռևս անվատահ մեքենայի «ուժերի» վրա, հարկադրեց նրան մեկը մյուսի ետևից ստեղծել Անիվներ, Ակնոցներ, Ամբարներ, Ատոմներ, Աղավնիներ, Աշտարակներ և Առորում: Վերջինս նա չկարողացավ ստեղծել, և Տրուբը սաստիկ վրդովմած, այդ առթիվ

լացատրություն պահանջեց նրանից:

— Ես չգիտեմ, թե դա ինչ է, — բացատրեց մեքենան: — Պարզապես չեմ լրսել այդպիսի իրի մասին:

— Բայց չէ որ դա ուկին է: Քիմիական մի էլեմենտ...

— Եթե դա ուկին է, ապա այն ընկնում է «ո» տառի տակ: Իսկ ես ընդունակ եմ անելու այն, ինչ սկսվում է «ա» տառով:

— Բայց լատիներեն այն կոչվում է առւրում:

— Սիրելիս, — ասաց մեքենան, — եթե ես կարողանայի անել այն ամենը ինչ բոլոր լեզուներում սկսվում է «ա» տառով, ապա ես կլինեմ Մեքենա, Որը Կարող է Անել Ամեն ինչ Ամբողջ Այբուբենի սահմաններում, որովհետև յուրաքանչյուր իր կամ առարկա որևէ լեզվում անկասկած սկսվում է «ա»-ով: Բայց ես արդքան կատարյալ չեմ: Ես չեմ

կարող անել ավելին, բայ դու պլանափորել ես: Այնպես որ ոսկի դու չես ըստանա:

— Լավ,— համաձայնվեց Տրուրլը և հրամայեց նրան պատրաստել Ամա:

Մեքենան անմիջապես ստեղծեց միանգամայն ճերմակ ամպի մի փոքրիկ կտոր: Այն ժամանակ Տրուրլը կանչեց իր մոտ կոնստրուկտոր Կլապաուցիուսին, ներկայացրեց նրան մեքենային և այնքան երկար գովեց վերջինի արտակարգ ընդունակությունները, որ Կլապաուցիուսը զայրացավ ու պահանջեց, որպեսզի իրեն էլ բուլլ տան փորձարկել մեքենան:

— Խնդրեմ,— ասաց Տրուրլը,— բայց դա պեսոք է լինի «Ա» տառով:

— «Ա»-ով, շատ բարի: Թող անի Աստղագիտություն:

Մեքենան սկսեց դռառալ, և շուտով Տրուրլը տան առջևի հրապարակը լըցվեց աստղագետների բազմությամբ: Նըրանք քրորում էին իրենց ծոծրակները, հաշվումներ անում, գրում հաստ զըրքեր, ումանք պատառուում էին այդ զըրքերը, ծվեն-ծվեն անում: Հեռվում կարմըրին էին տալիս խարույկներ, որոնց վրա այրվում էին գիտության տանջանարները: Ումանք էլ հեռադիտակները երկինք ուղղած հետազոտում էին տիեզերքի ան-

եռունը, իսկ առհասարակ այդ ամբողջ բազմությունը խոսում էր միաժամանակ, այնպես, որ անհնար էր որևէ բան հասկանալ: Ժամանակ առ ժամանակ աստղագետների խումբը կազմում էր հուշաւատյաններ, կոչեր և այլ փաստաթղթեր, իսկ աղմկողների կողքին նստել էին մի բանի միայնակ ծերունիներ և մասր ձեռագրով լցոնում էին պատառութված թղթ-թերը:


— Դե, ի՞նչ կասես,— հպարտ բացականչեց Տրուրլը:— Խոստովանիր, որ սա աստղագիտությունն է, որ կա:

Բայց Կլապաուցիուսը դժգոհ էր:

— Ի՞նչ: Այս ամբո՞ին է աստղագիտությունը: Ո՞չ, աստղագիտությունը մի ինչ-որ ուրիշ բան է:

— Դե ի՞նչ,— բարկացավ Տրուրլը:— ասա, կոնկրետ ի՞նչ է աստղագիտությունը, և մեքենան տեղնուտեղը այն կանի:

Բայց Կլապաուցիուսը չգիտեր ինչ ասել, և որոշեց, որ ավելի լավ է մեքենային տա ևս երկու առաջադրանք, եթե դրանք էլ կատարի, ապա ինքը կընդունի, որ մեքենան կատարյալ է: Տրուրլ համաձայնվեց, և Կլապաուցիուսը հրամայեց մեքենային անել Անիրականություն:





40

— Անիրականություն... — բացահանչեց Տրուրլը: — Ինչե՞ր ես հորինում, ի՞նչ անիրականություն:

— Ինչպես թե: Անիրականություն, այսինքն իրականում գոյություն չունեցող, այլ կերպ ասած իրականությունից լուրս, — հանգիստ առարկեց Կլապացիուսը: — Չե՞ս լսել ինչեր են հորինում ֆանտաստները իրականում գոյություն չունեցող բաների մասին: Ապա մի գործի անցի՞ր մերենա:

Իսկ մերենան վաղուց արդեն գործում էր: Սկզբում նա ստեղծեց անտիպրոտոններ, հետո անտիէլեկտրոններ, անտինեյտրինոններ և աշխատեց այնքան, մինչև որ պատրաստեց հնկայական բանակությամբ անտինյութ, որից աստիճանաբար սկսեց ձևավորել տարօրինակորեն պաղացող ամպի նման հակաշխարհ:

— Հըմ, — ձգեց սաստիկ դժգոհ Ելապացիուսը, — և սա նշանակում է Անիրականություն... Ը՞ը, լավ, թող լինի

այդպես, ընդունենք, որ մոտավորապես այդպես է... Բայց իմ երրորդ կարգադրությունը: Մերենա՛, ստեղծի՛ր Անէություն:

Երկար ժամանակ մերենան ընդհանրապես չէր շարժվում: Կլապացիուսն արդեն սկսեց բավականությամբ ձեռքերն իրար շփել:

— Ի՞նչ է որ, — ասաց Տրուրլը, — չէ որ դու նրան կարգադրեցիր ստեղծել Անէություն, այսինքն՝ ոչինչ, իսկ դա նույնըն է, թե ոչինչ չի ստեղծել:

— Այո, ես կարգադրել եմ ստեղծել Անէություն, ոչինչ: Իսկ դա բոլորովին այլ բան է: Ասել ոչինչ և ոչինչ չանել՝ տարբեր բաներ են: Իսկ մերենան ոչինչ չարեց, ուրեմն ես հաղթեցի: Չե՞ որ Անէությունը, հնարազետ իմ կողեզա, ոչ թե ինչ էնակն ոչնչություն է՝ ծովության ու անգործության արդյունքը, այլ իդեալական, եպակի, ամենահիան և բարձրագույն Անէությունը՝ բացակա դեմքով:

— Մերենայի գլուխը մի տա՞ր, — գոռաց Տրուրլը, բայց այդ պահին լսվեց մերենայի բրոնզե ձայնը.

— Վե՞րջ տվեք ձեր վեճին: Ես գիտեմ ի՞նչ է Անէությունը, Աննյութականությունը, բանի որ դրանք «Ա» տառի բանալու տակ նշանակում են Անգործություն: Ազելի լավ է վերջին անգամ մի նայացք ձեզ աշխարհի վրա, որովհետև այն շուտով կդադարի գոյություն ունենալուց...

Խոսքը սառեց կատաղած կոնստրուկտորի շրթունքներին: Մերենան, իրոք որ Անէություն էր անում մեկը մյուսի ետեղից աշխարհի երեսից վերացնում էր՝ զանազան իրեր, որոնք այնպես էին դադարում գոյություն ունենալուց, ասես առնասարակ եղած էլ չլինեին:

Այդ ձևով նա վերացրեց ամորվոնները, այգեղջերները, ասնեկները, առևսկանիվները, աշակերավները, ամերտոնները, ամասելոնները: Երբեմն թվում էր, թե մերենան փոխանակ նվազեցնելու,

կրծատելու, ոչչացնելու և փոքրացնելու
մեծացնում և ավելացնում է, որովհետև
իրար ետևից վերացրեց Անբավականու-
թյունը, Անգործնականությունը, Անհա-
վատությունը, Անհանգստությունն ու Ան-
կարողությունը: Բայց հետո նրանց շոր-
ջը նորից սկսեց ընդարձակ և ազատ
դառնալ:

— Վա՛յ, — բացականչեց Տրուրլը: —
Հանկարծ մի վատ բան չպատահի...

— Չէ, ինչ ես ասում, — ասաց Կլա-
պատցիուսը, — չե՞ս տեսնում, որ նա
ամեննկին էլ Համընդիանուր Անէություն
չի անում, այլ պարզապես վերացնում է
«Ա» տառով սկսվող առարկաները: Եվ
առանձնապես ոչինչ էլ չի պատահի,
որովհետև քո մերենան բանի պետք չէ:

— Չարաչար սխալվում ես, — պա-
տասխանեց մերենան: — Ես իրոք սկսել
եմ այն բոլորից ինչ «Ա» տառով է, բա-
նի որ դա ինձ ավելի ծանոթ է: Բայց վե-
րացնել որևէ առարկա կամ ստեղծել
այն՝ տարրեր բաներ են: Ես ընդունակ
եմ ամեն ինչ ոչչացնել, որովհետև կա-
րող եմ անել այն բոլորը, ինչ սկսվում է
«Ա» տառով, իսկ դա նշանակում է, որ
ինձ համար միանգամայն դատարկ բան
է Անէություն անելը: Հիմա դուք էլ կվե-
րանաք, և ընդհանրապես ոչինչ չի մնա,
այնպես որ Կլապատցիուս, իսկույն ևեր
ասա, որ ես իսկապես ունիվերսալ և
ունիկալ մերենա եմ, որ բոլոր հրաման-
ները կատարում եմ ինչպես հարկն է,
այլպես հետո ուշ կլինի:

— Բայց դա... սկսեց սարսափահար
Կլապատցիուսը և հենց այդ պահին նը-
կատեց, որ անհետանում են ոչ միայն
«ա»-ով սկսվող առարկաները: Արդեն
շրջապատից վերացան կամբուզեները,
գրոսվեները, կելքանները, ստակեպները,

կրծմակները, շաֆիանդուզները, լատովա-
ներն ու կուգուսները:

— Կա՛ց, սպասի՛ր: Ես եմ վերցնում
իմ խոսքերը: Վե՛րջ տուր: Անէություն
մի՛ արա, — ամբողջ կոկորդով գոռաց
Կլապատցիուսը, բայց նախօքան մերենան
կանգ կառներ, անհետացան նաև մաս-
նեկները, երիզնակները, կատիկատոպնե-
րըն ու կրետինաֆները:

Այնժամ միայն մերենան լրեց: Աշ-
խարին ուղղակի զարհուրելի տեսք էր
ընդունել: Հատկապես տուժել էր երկին-
քը. երկում էին աստղերի նոսր կուլտեր
միայն. հետքն անզամ չեր մնացել սքան-
չելի կուգուսների ու երիզնակների, որոնք
այնպէս զարդարում էին երկնակամարը:

— Օ՛, երկինք, — բացականչեց Կլա-
պատցիուսը: — Իսկ ո՞ւր են կամբուզել-
ները: Ո՞ւր են իմ սիրելի կատիկատոպ-
ները, ո՞ւր են այնքան հաճելի երիզնակ-
ները:

— Զկա՞ն և արդեն երբե՛ք էլ չեն լի-
նի, — հանգիստ պատասխանեց մերե-
նան: — Ես կատարեցի, ավելի ճիշտ,
լոկ սկսեցի կատարել այն, ինչ դու կար-
գադրել էիր...

— Ես քեզ կարգադրել էի Անէու-
թյուն անել, իսկ դու... դու...

— Կլապատցիուս, դու կամ հիմար
ես, կամ հիմար ես ձևանում, — առարկեց
մերենան: — Եթե ես Անէություն անեի
միանգամից, մի հարվածով, ապա կդա-
դարենք գոյություն ունենալուց ամեն ինչ,
ուրեմն, ոչ միայն Տրուրլը, այլև երկին-
քը, տիեզերքը, դու և նույնիսկ ես: Այն
ժամանակ արդեն էլ ո՞վ և ո՞ւմ կարող էր
ասել, որ հրամանը կատարված է, որ ես
հրաշալի մերենա եմ:

— Դե, լավ, բող բոնը լինի, դրա
մասին այլևս չխոսենք: Ես արդեն քե-

զանից ոչինչ չեմ ուզում, նոյակապ մերենա, միայն թե ես թեր, խնդրում եմ, մասնելիները, թե չե առանց դրա մարդու ապրելն էլ չի գալիս...

— Չեմ կարող, որովհետև նրանք «Ա»-ով են,— ասաց մերենան: — Ես, ինարկե, կարող եմ վերատին ստեղծել Անբավականություն, Անտեղյակություն, Անբուժելիություն, Աստեղություն, Անհավարություն, Անկարողություն և Անկայունություն, բայց մնացած բոլոր տառերի համար խնդրում եմ ինձանից ոչինչ չսպասել:



— Բայց ես ուզում եմ, որ լինեն կատիկատոպներ,— ճշաց Կլապառցիուսը:

— Կատիկատոպներ չեն լինի, — կըտից մերենան: — Դու ավելի լավ է նայիր աշխարհին՝ որքան զգվելի սև անցքեր են բացվել այժմ նրանում, և ինչպես այդ անէությունը լցրել է միջաստղային անբատակ անդունդները, կախվել Գոյության ամեն մի մոլեկուլի վրա: Այդ դու ես մեղավոր, կովասեր ու չարակամ իմ փորձարկող: Չեմ կարծում, որ ապագա սերունդները շնորհակալ լինեն թեզ դրա համար...

— Իսկ, գուցե նրանք չիմանան... գուցե և չնկատեն... — բթի տակ խոսեց գունատված Կլապառցիուսը՝ սարսափահար դիտելով սև երկնքի դատարկությունը և չհամարձակվելով նայել անգամ իր կողեզայի աչքերին: Թողնելով նրան մերենայի մոտ, որը կարողանում էր անել «Ա» տառով սկսվող ամեն ինչ, Կլապառցիուսը դանդաղ հեռացավ տուն: Իսկ աշխարհը մինչև օրս էլ մնացել է Անէությամբ ծակծկված այնպես, ինչպես որ եր այն պահին, երբ Կլապառցիուսը կանգնեցրեց մերենան: Եվ քանի որ դեռևս չի հաջողվել ստեղծել այնպիսի մերենա, որն աշխատի որևէ այլ տառով, ապա պետք է վախենալ, որ արդեն երբեք ու երբեք չեն լինի այնպիսի հրաշալի, զրմալելի երևույթներ, ինչպիսիք կուգուներն եին և կատիկատոպները:

Ռուսերենից թարգմանեց՝
ՎԼ. ՄԱՆՈՅԱՆ